

Պոպուլիզմը որպես աղքատության հաղթահարման քաղաքականության հիմք և քաղաքականության ձախողման պատճառ¹

Ադասի Թադևոսյան, Սոցիալ/մշակութային մարդաբան

Ներկայացվող վերլուծությունը իրականացվել է ըստ հրապարակում առկա գրավոր աղբյուրների և իմ կողմից իրականացված որակական հետազոտության տվյալների հիմա վրա:

Ըստ Հայաստանի վիճակագրական ծառայության աղքատության ծավալը Հայաստանում մոտ 30 % է կազմում: Այսինքն համարյա յուրաքանչյուր երրորդ քաղաքացին ապրում է աղքատության գծից ներքև: Չնայած աղքատության հաղթահարմանն ուղղված կառավարության ծրագրերին, վերջին տաս տարվա տվյալները թույլ են տալիս ասել, որ հաջողություններ այդ ոլորտում չկան և աղքատությունը ոչ միայն չի հաջողվել նվազեցնել, այլ այսօր իր ծավալներով գերազանցում է 2008 թվականի ցուցանիշը, որը կազմում էր մոտ 27%: Նկատենք, որ խոսքը վերաբերում է ոչ թե աղքատության նվազեցմանը, այլ աղքատության ցուցանիշի կրճատմանը: Խնդիրն այն է, որ Հայաստանում աղքատությունը չափվում է ըստ պետականորեն սահմանված ցուցանիշների: Ըստ այդմ սահմանված է, որ *աղքատությունը՝ որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է*, իսկ աղքատության չափման չափանիշներ են ընդունված՝ *աղքատության վերին ընդհանուր գիծ՝ 41698 ՀՀ դրամի, աղքատության ստորին ընդհանուր գիծ՝ 34134 ՀՀ դրամ և աղքատության պարենային գիծ՝ 24109 ՀՀ դրամ*: Համապատասխանաբար, ըստ այս ցուցանիշների էլ որոշվում են աղքատները, շատ աղքատները և թերսնվող ծայրահեղ աղքատները: Հայաստանում ապրող և կենսապահովման համար իրական ծախսերին ծանոթ ցանկացած քաղաքացի կարող է փաստել, որ այս թվերը խիստ արհեստական են, իրատեսական չեն և նշված գումարներով հնարավոր չէ մեկ ամիս ապրել: Հենց այդ պատճառով էլ վերը նշվել է, որ պետական քաղաքականությունը ուղղված է ոչ թե աղքատության, այլ՝ աղքատության սահմանված ցուցանիշի նվազեցմանը և իր բնույթով խիստ պոպուլիստական է: Պետական քաղաքականության պոպուլիզմը էլ ավելի ակնհայտ

¹ Այս գեկույցի հիմքում ընկած է ԱՄՆ Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Հայկական հետազոտությունների ինստիտուտի (Institute of Armenian Studies, University of Southern California-USA) կողմից շնորհված «Աղքատությունը, անհավասարությունը և առօրեականությունը Հայաստանում» հետազոտական դրամաշնորհի շրջանակներում իրականացված ուսումնասիրության նյութերը: Հետազոտության և գեկույցի մեջ ներկայացված կարծիքները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ ներկայացնեն Հարավային Կալիֆոռնիայի Համալսարանի տեսակետները:

է դառնում, երբ ուսումնասիրում ենք աղքատության որակական բնութագրին վերաբերող մի շարք այլ երևույթներ:

2017 թ. հունվար – մայիս ամիսներին Հայաստանի տարբեր բնակավայրերում իրականացված որակական հետազոտության տվյալներով աղքատության հաղթահարման ոլորտում իրականացվող քաղաքականության գլխավոր թերությունը կարելի է համարել այն, որ աղքատությանը մոտենում են զուտ որպես տնտեսական երևույթ՝ կապված մարդու եկամուտների կամ սպառման կարողությունների ցածրության հետ: Սակայն, իրականում աղքատությունը շատ բազմաչափ երևույթ է և դրա պատճառները նունպես բազմազան են: Աղքատության հիմնական պատճառներից մեկը, ըստ հետազոտության տվյալների, որը նաև եկամուտների բևեռացման ու անհավասարության պատճառն է, դա **հասարակությունում հավասարության և արդարության դիսկուրսի համարյա թե բացակայությունն է**: Դրան հակառակ, բավական տիրապետող է անհավասարության դիսկուրսը, որտեղ անհավասարների ամենաստորին շերտը համարվում են աղքատները, որոնք հաճախ մեկուսացված են:

Ստեղծված իրավիճակում, աղքատության հաղթահարման գործում կարևոր դեր կարող է ստանալ հավասարության դիսկուրսի ծավալումը: Իրենք աղքատները, ցավոք այդ դիսկուրսը չեն կարողանում ծավալել դրա պոտենցիալը և ռեսուրսները չունենալու պատճառով: Մնում է այլ դերակատարներ փնտրել, ովքեր իրենց վրա կկարողանան վերցնել այդ դերակատարության իրականացումը: Ներկայացվող գեկույցում կքննարկվի, Հայաստանում աղքատության և անհավասարության դիսկուրսի բնորոշ առանձնահատկությունները և այն հարցը, թե կան արդյո՞ք հասարակությունում այնպիսի խավեր կամ խմբեր, ովքեր կկարողանան իրենց վրա վերցնել այդ դերակատարությունը:

Աղքատության հիմնախնդրին նվիրված իմ իրականացրած որակական հետազոտության տվյալները թույլ են տալիս անել մի շարք դիտարկումներ:

Կարելի է հանդիպել մարդկանց, ովքեր կամ նյութապես են աղքատ կամ բազմաչափ աղքատության մեջ են, սակայն չեն գնահատում իրանց վիճակը որպես աղքատ: Բնակչության այս շերտում տարածված է նաև աղքատ լինելը համարել ամոթ բան: **Շատ դեպքերում նման մարդիկ աղքատ լինելը համարելով ամոթ, իրենց վիճակը գնահատում են որպես միջին կամ «նորմալ»**: Մարդիկ ովքեր աղքատությունը համարում են ամոթ, բայց իրականում ապրելով աղքատության մեջ իրենց չեն համարում աղքատ, ըստ որոշ փորձագիտական գնահատականների, իրենք իրենց կարգավիճակը ադեկվատորեն չգնահատելու հետևանքում չեն կարողանում նաև

իրենց աղքատությանը հաղթահարելուն ուղղված նպատակներ ու ձգտումներ դնել: Սա իր հերթին ազդում է նաև այն բանի վրա, որ հասարակությունում չեն ձևավորվում բավականաչափ ակտիվ ու շահագրգիռ ուժեր, ովքեր կարող են իրենց կարիքի հիման վրա *պահանջարկ* ձևակերպել ու ներկայացնել քաղաքական հարթակներում: Հասարակական պահանջարկի ձևակերպման բացակայության պայմաններում ի հայտ է եկել մի իրավիճակ, երբ քաղաքական ուժերը ոչ թե ներկայանում են հասարակական ձևակերպված պահանջարկին ուղղված ծրագրային առաջարկներով, այլ բավարարվում են հասարակության աղքատ բնակիչներին որոշ մասնավոր օժանդակություններ ցուցաբերելով, ինչը լուծում է առանձին վերցրած մարդկանց միայն տվյալ պահի այս կամ այն կարիքը, սակայն չի լուծում լայն առումով գոյություն ունեցող աղքատության հիմնախնդիրը:

Աղքատ լինելը բացի ամոթ լինելուց, նաև արհամարելի է, իսկ հարուստ լինելը դա լավ է: Հետևաբար և հարստանալու բոլոր ճանապարհները, այդ թվում և կոռուպցիան, գողանալը, շահագործելը, հարստահարելը համարվում են *նորմալ*: Այսինքն, մի կողմից աղքատ խավերը *նորմալ* են համարում իրենց աղքատությունը, չանվանելով դա աղքատություն, եթե կարողանում են ապահովել առաջնային նվազագույն կարիքները, չնայած, իրականում գտնվում են աղքատության մեջ: Մյուս կողմից, *նորմալ* է համարվում այն բոլոր անօրինական ու զարտուղի, հակահասարակական պրակտիկաները, որոնց միջոցով հարուստները ձևավորում և վերարտադրում են իրենց հարստությունը: *Նորմալ*-ի այս երկակի ընկալումը, առաջին հայացքից ունի հակասական ու պարադոքսալ բովանդակություն, երբ *մի կողմից, նորմալացնում է աղքատ լինելը, մյուս կողմից՝ աղքատություն ձևավորող ու խորացնող այն պրակտիկաները որոնց շնորհիվ հարուստներն էլ ավելի են հարստանում և խորացնում հարուստներից աղքատների կախվածության, ենթակայության ու անհավասարության իրավիճակը*: Ստացվում է այնպես, քանի որ աղքատ լինելը ամոթ է համարվում, մարդիկ չեն ցանկանում իրանց վիճակը աղքատ գնահատել և իրականում աղքատ վիճակը գնահատում են նորմալ: Միաժամանակ, նրանք նորմալ են համարում նաև հենց իրենց, աղքատ խավերին շահագործելու, հարստահարելու եղանակով կամ պետական ու հասարակական միջոցները թալանելու ճանապարհով հարստացման ձևերը: *Այս իրավիճակում, մի կողմից հասարակության մեջ տարածված աղքատության ու ամոթի, մյուս կողմից «նորմալի» ընկալումները հասարակությունում աղքատության ու անհավասարության վերարտադրության առանցքային գործոններ են դառնում, քանի որ թուլացնում և ըստ էության լիովին չեզոքացնում են հարուստների կողմից շահագործվող ու շարունակական աղքատության մեջ պահվող աղքատ խավերի դիմադրության հնարավորությունը:*

Այս առումով, կարելի է ասել, որ աղքատության դեմ պայքարի կարևոր քաղաքականներ կարող են դառնալ աղքատության ու ամոթի, աղքատության ու նորմալի, հարստության ու նորմալի վերաբերյալ գործող ընկալումներն ու դրանց հետ կապված առօրյա դիսկուրսներն ու պրակտիկաները փոխելը: Ակնհայտ է, որ չքավոր ու աղքատ խավերը վերարտադրում են նորմալի մասին հարուստ խավերի դիսկուրսը: Հենց հարուստ խավերի կողմից է տարածվում հարստանալու զարտուղի ճանապարհները, որպես նորմալ ու նույնիսկ ընդօրինակելի համարող դիսկուրսը: Աղքատ խավերի կողմից այս դիսկուրսի ընդունումը նպաստում է, որ նրանք անընդհատ արդարացնեն հարուստների պրակտիկաները, որոնցից մեկն էլ իրենց աղքատ ու կախյալ վիճակում պահելն է: ***Ստացվում է այնպես, որ աղքատների մի զգալի մաս, խուսափելով իրեն աղքատ համարել, արդարացնում է հարուստների հարստացման անօրինական և իրենց մշտական աղքատության մեջ պահելու պրակտիկաները և դրանք ծնող դիսկուրսը:***

Ըստ անհատական հարցազրույցների նյութերի աղքատության պատճառներից մեկը համարվում է աղքատների մտածողությանը բնորոշ մի շարք հատկանիշներ: Հաճախ հանդիպող արտահայտություններից է այն, որ *աղքատներն իրենց խելքից են աղքատ:* Աղքատների մտածողության գլխավոր պրոբլեմներից մեկը տարածված կարծիքի համաձայն համարվում է *աղքատների կարճաժամկետ մտածողությունը:* Անհատական հարցազրույցներում հաճախ են հանդիպում աղքատներին ներկայացվող մեղադրանքներ, այն բանի համար, որ նրանք չունեն ռազմավարական մտածողություն և հաճախ նախընտրում են իրենց պահանջումներն արձարարման կարճաժամկետ լուծումներ, քան՝ երկարաժամկետ: Ասենք օրինակ, կարող են վերցնել գյուղատնտեսական վարկ, բայց դրանով գնել ձմեռվա վառելիք, հագուստ և սնունդ: Կամ ասենք, ընտրակաշառք վերցնեն, առօրյա խնդիր լուծելու համար և ընտրեն իրենց անընդհատ աղքատության մեջ պահող քաղաքական ուժերին: Աղքատներին հաճախ նաև մեղադրում են այն բանում, որ նրանք սովորել են աղքատ ապրելուն, քչով բավարարվելուն, հեռուն չնայելուն, ապագան չպլանավորելուն, կյանքից անընդհատ բողոքելուն և ուրիշների օգնությունը խնդրելուն, ջանքեր չթափելուն և նման այլ մոտեցումների մեջ, որոնք էլ համարում են նրանց աղքատության պատճառ:

Ըստ էության, արտահայտված կարծիքները, կապված աղքատների մտածողության առանձնահատկությունների հետ, հաճախ համապատասխանում են իրականությանը: Ըստ փորձագետների, խնդիրն այստեղ այս դիսկուրսի մեկ այլ առանձնահատկության հետ է կապված: ***Պրոբլեմն այն է, որ այդ ամենի մեջ մեղադրվում են հենց աղքատները, իսկ իշխող հարուստների վերնախավերը, ովքեր***

գործադրելով իրենց արտոնյալ կարգավիճակը, տարիներ շարունակ զրկանքների են ենթարկել այս խավերի մարդկանց և ստիպել նրանց, որպեզի նրանք համակերպվեն իրենց վիճակի հետ և հարմարվեն կարճաժամկետ լուծումների, այս դիսկուրսի մեջ ընդհանրապես չեն դիտարկվում որպես պատասխանատուներ: Վերջինս կարևոր է այն առումով, որ կարող է ազդել աղքատության ոլորտում վարվող քաղաքականությունների վրա: Եթե մեղավորներն աղքատներն են, ապա այստեղ նրանց մեղադրելով իրենց իսկ վիճակի ստեղծման մեջ, լավագույն դեպքում կարելի է բավարարվել սոցիալական նպաստներ տալով: Այսինքն, պետականորեն զբաղվելով պոպուլիզմով: **Իսկ եթե աղքատության մեղավորները համարվում են ոչ թե իրենք աղքատները, ապա կարող է դա արմատականորեն փոխել քաղաքականության շեշտադրումները, քանի որ այդ դեպքում աղքատությունն ձևավորող պատճառները կարող են նկատելի դառնալ հարուստների շահերի իրացմամբ զբաղվող կառավարության քաղաքականության մեջ ու նպատակը կարող է դառնալ հարուստներին արտոնյալ կարգավիճակ տվող անհավասարության ու խտրականության քաղաքականությունների վերանայումը և քաղաքականություններում աղքատների ու հասարակական այլ խավերի շահերի կարևորումը:** Նշված մոտեցման դեպքում արմատականորեն կարող են փոխվել աղքատության հաղթահարման ռազմավարությունները և նպաստել սոցիալական քաղաքականություններում արդարության ու հավասարության գաղափարների արտացոլմանն ու իրացմանը:

Ըստ փորձագիտական հարցման տվյալների աղքատներն իրենք չեն կարող հաղթահարել ստեղծված իրավիճակը, քանի որ իշխող հարուստների դասը լիակատար կախվածության մեջ է պահում նրանց, թույլ չտալով նրանց իրողությունները գնահատել սեփական շահերի դիրքերից :Այս իրավիճակում ցանկացած գործողություն, եթե չի հանդիպում աղքատ խավերի և նրանց շահերը պաշտպանող ուժերի դիմադրությանը, նույնիսկ եթե իրականացվում է բարեփոխման անվան տակ, ուղղված է լինելու հարուստ խավերի շահերի պաշտպանությանը և անհավասարության խորացմանը, քանի որ իշխանությունը գտնվում է հարուստների ձեռքում և ծառայեցվում է նրանց շահերին:

Նման իրավիճակներում հիմնական ուժը, ով կարող է վերցնել աղքատ ու սոցիալապես անապահով խավերի շահերի պաշտպանության դերակատարումը կարող է դառնալ միջին խավը: Այս խավը ավելի գիտակից է և կարող է հանդես գալ անապահովների շահերի ձևակերպողի ու տարբեր հարթակներում ներկայացնողի դերում: Սակայն, խնդիրն այն է, որ Հայաստանում միջին խավը խիստ փոքրաթիվ է, բավականաչափ ազդեցիկ չէ, հաճախ նաև անկախ չէ և չունի գաղափարական ու քաղաքական կազմակերպվածություն: Նման իրավիճակում որոշակի դերակատարում կարող են ստանալ ՀԿ-ները և քաղաքացիական

նախաձեռնությունները, ովքեր կարող են փոխարինել դեռևս չկայացած միջին խավին: Մակայն, ՀԿ-ները միայնակ նույնպես բավարար ուժ չեն կարող համարվել, առկա դիսկուրսը փոխելու համար: Այս պարագայում, մնում է ակնկալել նաև ձախ գաղափարախոսական թեքում ունեցող քաղաքական ուժերի աջակցությունը հասարակությունում հավասարության գաղափարը շրջանառելու, արժևորելու ու դրանից բխող պրակտիկաներ ձևավորելու գործում, առանց որոնց սոցիալական արդարության գաղափարը իրականության վերածելու հավանականությունը շատ թույլ է: